

ՌԴ - ԱՐԵՎՍՈՒՏՔ ՆԵՐԿԱ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Հակառակ այն պատկերացումներին, թե Վլադիմիր Պուտինի ժամանակների ռուսական վերնախավը չունի գաղափարախոսություն և արժեհամակարգ, նրա վարչակարգը միշտ ունեցել է գաղափարախոսություն: Արդեն իր կառավարման առաջին տարում՝ 2000 թվականի դեկտեմբերին, նախագահը վերադարձրեց խորհրդային օրհներգը: Դա քաղաքական ակտ էր՝ գաղափարական առաջնահերթությունների հստակ կառուցմամբ: Պուտինի գաղափարախոսությունը համակարգված չէ, բայց այն գոյություն ունի և ցրված է նրա ելույթներում, հոդվածներում և հարցազրույցներում: Պատերազմը պահանջում էր նրա հստակեցումը և սըրբադասումն այն պատճառով, որ Պուտինի հակաարևմտյան հռետորաբանությունը և ավտորիտար վարչակարգը 2020-2022 թվականներին մտել են հասունության փուլ: Պատերազմի սկսվելուց հետո հատկապես նկատելի դարձան պաշտոնական գաղափարախոսություն ձևավորելու ջանքերը, որոնք, բացի այդ, պետք է արդարացնեն պատերազմը: Բառացիորեն մի քանի տարվա ընթացքում պաշտոնական Կրեմլը զարգացրեց այն պատկերացումները, որ 2022 թվականի "հատուկ գործողությունը" Հայրենական մեծ պատերազմի բնական շարունակությունն է: Ընդհանուր առմամբ, սա ռուսական քաղաքակրթության էքզիստենցիալ պայքարն է Արևմուտքի հետ:

Նրանք, ովքեր ծանոթ են կամ ուսումնասիրել են սառը պատերազմը նախորդ աշխարհակարգում, հաստատ կհիշեն հանրահայտ սահմանումը, որ դա երկու բևեռների տոտալ և գլոբալ հակամարտությունն էր:

Տոտալ հակամարտությունը ընդգրկում էր նաև գաղափարական բաղադրիչը՝ կոմունիստական/սոցիալիստական աշխարհայացքն ու գաղափարախոսությունն ընդեմ կապիտալիստական/լիբերալ աշխարհայացքի և գաղափարախոսության:

Իհարկե դեռ կան վիճելի տեսակետներ, թե արդյոք ներկա իրադրությունը կարող ենք լրիվ նույնականացնել հին սառը պատերազմի հետ և այս քաղաքագիտական դիսկուրսը դեռ տևական ժամանակ կշարունակվի, սակայն արդեն ի հայտ են եկել նոր առճակատման գաղափարական/քարոզչական բաղադրիչները: Կրեմլում կրկին գաղափարական վեճերի մեջ են աշխարհի մյուս կեսի հետ: Այս տպավորությունն է ստացվում հատկապես վերջին իրադարձությունների հետ կապված ՌԴ նախագահ Վ. Վ. Պուտինի ելույթների շուրջ մտորումներից: Հատկապես ուշագրավ է 2023 թ. փետրվարյան ուղերձ/ելույթը: Կրեմլի Գեորգիևյան դահլիճում հավաքվել էին իշխանության բոլոր ճյուղերի ներկայացուցիչները՝ լսելու Վլադիմիր Պուտինի ելույթը Ռուսաստանին նոր տարածքներ միացնելու մասին: Արևմտյան լրատվամիջոցները արձագանքելով այդ ելույթին նշում էին, որ լրագրողների համար այս խոսքի մասին ինչ որ բան ասելը շատ դժվար է, եթե խնդիր է դրված վերապատմել հիմնական թեզերը, տալ արագ վերլուծություն և այդ ամենը դնել ոչ մեծ կապակցված տեքստի մեջ¹:

Պուտինը խոսեց է ավելի քան 35 րոպե: Ռուսաստանին կցված տարածքները այս ելույթի հիմնական թեման էին: Սակայն, իմ կարծիքով, այս ելույթը ուղղված էր աշխարհի մյուս կեսի դեմքը պարզելուն և նրա հակառուսական էությունը բացահայտելուն: Դա ռուսական առաջնորդի կողմից ազգային կերպարի վերհանման ռուսաստանցուն և "քցող Արևմուտքի" դիմակայության մասին ծայրահեղ կոնսերվատիվ գաղափարների հոսք էր: Այս ելույթը գաղտնիությամբ հազեցած վերացական գաղափարներ և թաքնված և բացահայտ մեյսիջներով էր հազեցված: Արևմուտքում այն գնահատեցին իրական փաստերի վրա չհիմնված հոմոֆորիա:

¹ Տե՛ս Սոսնիցինի Послание Президента Федеральному Собранию, 21 февраля 2023 года <http://www.kremlin.ru/events/president/news/70565> ; Подписание договоров о принятии ДНР, ЛНР, Запорожской и Херсонской областей в состав России <http://kremlin.ru/events/president/news/69465>

Փորձելով զերծ մնալ ռուսամետ կամ արևմտամետ կողմնակալ դիրքորոշումներից, փորձենք այնուամենայնիվ մեկնաբանել այս ելույթի որոշ գաղափարաքաղաքական դրույթներ:

1. Ազգերի ինքնորոշման իրավունք: Աչքի է զարնում այն, որ ինչպես այս ելույթում, այնպես էլ Վլադիվոստոկում և այլ հրապարակային խոսքի մեջ ՌԴ նախագահը հստակ բարձրացնում է **ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման և այդ իրավունքով ղեկավարվելու իմպերատիվ պահանջը:** Պուտինն ասաց, որ ուկրաինական տարածքների միացումը հիմնավորված է ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածով: Հոդվածում խկապես խոսվում է այն մասին, որ ՄԱԿ-ը հարգում է ազգերի ինքնորոշման սկզբունքները: Արևմտյան քարոզչամեքենան, որը կուրծք էր ծեծում ՄԱԿ-ի այս հոդվածով Կոսովոյի անջատման ժամանակ, այս թեզը համարում է անիրագործելի ուկրաինական տարածքների հարցում:

Այս թեզին ի պատասխան արևմտյան լրատվական և վերլուծական կենտրոններում շեշտադրեցին, որ Դոնեցկի, Լուգանսկի, Խերսոնի և Զապորոժիեի բնակչությունը այլ ազգեր չեն և որպես չորս առանձին ազգային ընդհանրություններ չեն կարող օգտվել ազգերի ինքնորոշման իրավունքից: Իհարկե խնդիր է նաև, որ հանրաքվեներն անցկացվեցին այն ժամանակ, երբ Ռուսաստանն ամբողջությամբ վերահսկում էր միացվող չորս տարածքները: Բարձրաձայնվեց նաև տնտեսական հիմնավորման անհրաժեշտությունը, որը կամ գաղտնի է պահվում, կամ էլ ամենայն հավանականությամբ, պարզապես բացակայում է: Ամեն դեպքում կարող ենք արձանագրել, որ ազգերի ինքնորոշման իրավունքի հարցը դարձավ քարոզչական ներկա բախման առարկա:

2. Պատմական արդարության սկզբունք: Կրեմլը առաջին պլան է մղում տարածքային վեճերի և դրանց պատկանելիության հարցում պատմական արդարության սկզբունքի կիրառումը: Պուտինի ելույթի մեջ կամիր թելի պես անցնում է վերոհիշյալ տարածքների պատմականորեն ռուսական լինելու փաստարկը: Նա նշեց, որ այստեղ, Նովոռոսիայում, Ռումյանցկը և Ուշակովը մարտնչեցին և արյամբ ընդարձակվեց ռուսական պետությունը, այստեղ Եկատերինա II-ը և Պոտյոմկինը հիմնադրեցին քաղաքներ և Հայրենական Մեծ պատերազմի տարիներին մեր պապերն էին զոհվում: Դոնեցկի և Լուգանսկի, Զապորոժիեի և Խերսոնի մար-

զերի ժողովուրդները կողմ են արտահայտվել պատմական միասնությունը վերականգնելուն:

3. Փրկություն ֆիզիկական ոչնչացումից: Առաջ է քաշվում անջատում հանուն փրկության թեզը: Պուտինը շեշտեց, որ ութ տարի Շրունակ Դոնբասում մարդկանց հանցավոր կերպով ցեղասպանության ու գնդակոծության են ենթարկել, փորձում էին ատելություն սերմանել ռուսաց լեզվի հանդեպ և հավելեց, որ Նովոռոսիայի ռուսները չեն կոտորվել և նրանք դառնում են ՌԴ քաղաքացիներ պարզապես փրկվելու համար:

4. Բանակցությունների առաջարկ: Պուտինը կոչ արեց Կիևին անհապաղ դադարեցնել գնդակոծությունները և վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ և շեշտեց, որ „մենք դրան պատրաստ ենք„: Սակայն Դոնեցկի, Լուգանսկի Հանրապետությունների, Խերսոնի եւ Զապորոժիեի մարզերի ժողովուրդների ընտրությունը չի չեղարկի: Ռուսաստանը նրանց չի դավաճանի:

5. Արևմուտքը ագրեսոր է: Այս հատվածում Պուտինի թեզերը ձևակերպված են այսպես: Ուկրաինայում իրենց աչքերով տեսան այն, ինչ Արևմուտքի իշխող վերնախավը պատրաստում է ողջ մարդկության համար; Ագրեսոր Արևմուտքը փլուզեց ԽՍՀՄ-ը հույս ունենալով, որ Ռուսաստանը ոտքի չի կանգնի այդ հարվածից և այլևս չի ապաքինվի: Ռուսաստանը կրկին ամրապնդվեց և Արևմուտքին պարզապես հանգիստ չի տալիս, որ աշխարհում կա այնպիսի գեղեցիկ, հարուստ տարածք, որը երբեք չի ապրի իր թելադրանքով: Նրա համար կարևոր է, որ բոլոր երկրները հանձնեն իրենց ինքնիշխանությունը հոգուտ ԱՄՆ-ի: Որոշ պետություններ կամովին համաձայնվում են վասալներ դառնալ, մյուսներին կաշառում են, վախեցնում, իսկ նրանց, ովքեր չեն համաձայնում, ոչնչացնում են՝ ստեղծելով մարդասիրական աղետի գոտի: Նրանք ցանկանում են մեզ ոչ թե ազատություն, այլ ուզում են մեզ գաղութ տեսնել և ոչ թե իրավահավասար համագործակցություն են ուզում, այլ թալան: Մեր զարգացումն ու բարգավաճումը նույնպես նրանց համար սպառնալիք է:

6. Համաշխարհային տիրապետության մասին: Ելույթում ընդգծվեց, համաշխարհային տիրապետության հավակնություններն անցյալում արդեն մեկ անգամ չէ, որ կոտորվել են ռուս ժողովրդի արիության ու տո-

կունության շնորհիվ: Արևմուտքը կարծում է, որ ամեն ինչ իր ձեռքում է: Այո, ամեն ինչ հայտնվել էր իր ձեռքում, բայց Ռուսաստանը մեծ երկիր է և նման պարտադրված կանոններով չի ապրելու:

7. Տոտալիտարիզմի մասին: Պուտինյան կարչակարգին տոտալիտար որակող արևմտյան քարոզչությանն ի պատասխան ՌԴ նախագահը հակադրվում է հետևյալ դրույթներով: Ղրիմում, Սևաստոպոլում և Նովոռոսիայում մարդկանց ընտրությանը գնահատական տալու ոչ մի բարոյական իրավունք Արևմուտքը չունի: Արևմտյան էլիտաների իշխանությունն ունի տոտալիտարիզմի, բռնապետության և ապարտեիդի բոլոր գծերը: Արևմտյան էլիտաները ինչպիսին էին, այդպիսին էլ մնացին՝ գաղութատիրական, նրանք ժողովուրդներին բաժանում են ըստ տեսակների, որ երբեք ընդունելի չէ, հարկ է հիշեցնել Արևմուտքին, որ նա սկսել է իր տոտալիտար քաղաքականությունը դեռևս միջնադարում, ամբողջ ազգերին թմրանյութեր էին հրամցնում, ոչնչացնում էին ամբողջ էթնոսներ, նպատակասլաց որս կազմակերպում մարդկանց դեմ:

8. Ռուսաստայացության պատճառների մասին: Ելույթում հարց է հնչեցվում, թե ինչու Արևմուտքում չեն սիրում ռուսներին: Եվ դրա պատասխանը տալիս է այսպես. «անթաքույց ռուսաստայացության պատճառներից մեկն այն է, որ մենք մեզ թույլ չենք տվել հավաքագրվել: Մենք առևտուր ենք իրականացրել փոխշահավետ պայմաններով»:

9. Ինտերվենցիայի մասին: Ռուսաստանը մեղադրվում է ինտերվենցիայի մեջ, այս մեղադրանքին Պուտինը պատասխանում է, նշելով որ իրականում բոլորովին այլ պատկեր է, որ բազմիցս Ռուսաստանի դեմ ինտերվենցիայի պլաններ են կազմվել: Միայն 1990-ականներին է հաջողվել տիրել Ռուսաստանի հարստությանը: Մենք ոչինչ չենք մոռացել:

10. Բռունցքի իրավունքի մասին: Ըստ Պուտինի ԱՄՆ-ի դիկտատը կառուցվում է բարձր իրավունքի վրա: Լինում է գեղեցիկ փաթեթավորված և միջազգային իրավունքով հիմնավորված, լինում է առանց դրա: Բայց էությունը մեկն է՝ բռունցքի իրավունք: Բոլոր նրանք, ովքեր համարձակվել են մարտահրավեր նետել այդ պետություններին, հայտնվել են թշնամիների բանակի մեջ: Դրա վրա կառուցվում են ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի դոկտրինները:

11. Միգրացիոն ճգնաժամի պատճառների մասին: Աշխարհը ցնցող միգրացիոն ճգնաժամի արմատները Պուտինը տեսնում է Վաշինգտոնում: Ըստ նրա հենց իր ապակառուցողական քաղաքականությամբ, պատերազմներով, թալանով էր, որ ԱՄՆ-ն առաջացրեց միգրացիոն հոսքերի աճ:

12. Հացահատիկի արտահանման և պարենային ճգնաժամի մասին: Պուտինը հնչեցնում է հետևյալ հարցադրումը. հիմա հաց են արտահանում Ուկրաինայից՝ պարենային անվտանգության պատրվակով: Ուր է այս ամենը գնում?: Կրկին Եվրոպա: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ արևմտյան էլիտաները չեն ծրագրում ելք փնտրել համաշխարհային պարենային ճգնաժամից, որն առաջացել է նրանց մեղքով, դեռևս հատուկ ռազմական գործողության մեկնարկից շատ առաջ:

13. Աշխարհի հանդեպ պատասխանատվության մասին: Պուտինի կարծիքով հասունացած հակասություններից դուրս գալու համար պետք է կոտրեն Ռուսաստանը : Եթե դա տեղի չունենա, չի բացառում, որ կցանկանան համակարգը հասցնել կոլապսի: Կամ նույնիսկ օգտվել "պատերազմն ամեն ինչ կսրբագրի" սկզբունքից: Ռուսաստանը հասկանում է իր պատասխանատվությունը միջազգային հանրության առջև: Եվ ամեն ինչ անելու է, այդ տաք գլուխների դեմ:

14. Հեգեմոնիայի դեմ շարժման մասին: Վերջում ևս մեկ դրույթ առանձնացնենք: Պուտինը նոր աշխարհակարգում կարևորում է պայքարը արևմտյան հեգեմոնիայի դեմ: Նա նշեց, որ շատ այլ երկրներում արդեն ընթանում է շարժումը հեգեմոնիայի դեմ: Ինքը ևս այսօր պայքարում է արդար և ազատ ճանապարհի համար, առաջին հերթին Ռուսաստանի համար: Նա նշեց, որ սա ճակատամարտ է Ռուսաստանի համար: Ուրիշներին ճնշելու վրա հիմնված քաղաքականությունը պետք է կոտրվի: Մարտի դաշտը, մեծ Ռուսաստանի համար է:

Որպես վերջաբան հավելենք, որ Ուկրաինա ռուսական ներխուժումից հետո "Պուտինյան կայունության" հայեցակարգը, զգալիորեն տուժել է, այն մերժվում է ներքին ընդդիմության և արևմտյան քննադատների կողմից: Դա Կրեմլին ստիպում է լրջորեն զբաղվել "ապագայի պատկերի" որոնումներով, որը կվերադարձնե վաղվա օրվա հանդեպ վստահությունը: Պահանջ կա ստեղծել ռուսական ապագայի այնպիսի հայեցակարգ,

որը կհամապատասխանի հասարակական տրամադրություններին: Կրեմլի քաղաքական բլոկը մտահոգված է "ապագայի պատկերի" մշակմամբ՝ Ուկրաինայում բլիցկրիզի ծրագրերը ձախողվեցին: Ռուսների համար դժվար է պատերազմը ընկալել որպես սերիալի կամ ֆուտբոլային խաղ: Անհրաժեշտություն առաջացավ բացատրել, թե հանուն ինչի պետք է զոհողությունների գնալ և դիմանալ պատժամիջոցների դժվարություններին և նաև, թե որտեղ է այժմ գնալու Ռուսաստանը: Նախագահական վարչակազմի բարեկամ փորձագետների մտահոգումների արդյունքը նաև Ռուսաստանի՝ որպես "ազատ մայրցամաքի" հայեցակարգն էր: Այսինքն՝ մի երկիր, որը գնում է հատուկ ճանապարհով և այդ ճանապարհից չի ամաչում: Արևմուտքն այդ տարբերակում վերջնականապես կորցնում էր թելադրողի դերային կարգավիճակը: Շրջանառվում է նաև՝ "Ռուսաստանը որպես ճիշտ Եվրոպա, որը պահպանել է ավանդական արժեքները" քարոզչական դրույթը: Սա երևում է Պուտինի վերջին ելույթներում, որտեղ նա նշում է, որ Եվրոպան, եթե ցանկանում է պահպանել ինքնությունը, պետք է լինի Ռուսաստանի հետ միասին: Մնացած աշխարհի համար առաջարկվում է հակազդության օրակարգ. Ռուսաստանի նախագահն այժմ խոսում է Ռուսաստանի մասին՝ որպես Արևմուտքի կողմից ճնշված երկրների առաջնորդի: